

ԲԱՐՁՐ ԷՆԵՐԳԻԱՆԵՐԻ ՑԵԶԻԿԱՅԻ ԹՆԱԳԱՎԱԾՈՒՄ ԷՔՍՊԵՐԻՄԵՆ-
ՏԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հոդվածում քննարկվելու հն Հայաստանում ղարգացում ստացած բարձր էներգիաների զենքում ֆիզիկական էքսպերի-մենտի մեթոդիկայի սրոշ հարցեր կապված կայծային խցիկների միջոցով լիցրավորված մասնիկների ղետեկտացման, արգելակման ճառադայթման օգնությամբ մոնուներգետիկ և բևեռացված շ (գամմա) քվանտների ստացման, արագ մասնիկների էներգիան չափելու համար անցումային ճառադայթումն օգտագործելու, նյութի նուրբ թաղանթում շագեցվող իոնացման կորուստների, միջուկային էմուլսիաների մշակման արագընթաց մեթոդի հետ:

Էքսպերիմենտալ առաջին սարքավորումը, որով սկսվեցին տիեզերական ճառագայթների սիստեմատիկ հետազոտությունները, Ալիխանով-Ալիխանյանի մասս-սպեկտրաչափին էր¹: Մեթոդական հետազոտությունները հիմնականում կատարվում էին մասս-սպեկտրաչափով և պայմանավորված էին նրա կատարելագործումով: Հետազոտվում էին սպեկտրաչափի տարրերակները, քննարկվում էին այլ սարքերով այն լրացնելու հնարավորությունները: Հարկ է նշել սպեկտրաչափի գողոսկոպիկ սիստեմը, որը բաղկացած էր Գեյգեր-Մյուլերի նրբապատ ինքնամարող հաշվիչներից. վերջիններիս պատրաստման տեխնոլոգիան մշակվել է երևանի ֆիզիկայի ինստիտուտում: Այդ տեխնոլոգիան լայնորեն օգտագործվել է միության այլ լաբորատորիաներում, քանի որ այդ ձեռվ պատրաստված հաշվիչները արշավախմբի պայմաններում ցուցարերում

¹ Алиханян А. К., Дацаян А. Т., Акопян Г. С. и др., О новом магнитном спектрометре. ДАН СССР, 1951, т. 80, № 1, стр. 37.

Алиханян А. К., Кириллов-Угрюмов В. Г. и др., Магнитный массспектрометр в сочетании с камерой Вильсона. ДАН СССР, 1953, т. 92, № 2, стр. 255.

էին բարձր կայունություն: Սպեկտրաչափի կատարելագործում-ների շարքում պետք է նշել նաև նրա լրացումը Վ. Խարիտոնովի մշակած համեմատական հաշվիչով, Վիլսոնի երկու մեծ խցիկներով, սցինցիլացիոն հաշվիչներով:

Մեծ նշանակություն ունեցավ Երևանի ֆիզիկայի ինստիտուտի տիեզերական կայաններում իրոնացման կալորիաչափի մեթոդի իրագործումը, որն առաջարկեցին Ն. Լ. Գրիգորովը, Վ. Ս. Մուրզինը և Ի. Դ. Ռապովորտը²: Կալորիաչափի օգնությամբ հնարավոր եղավ որոշել տիեզերական ճառագայթման առաջնային մասնիկների բարձր ու գերբարձր էներգիաները: Մուկվայի պետական համալսարանի միջուկային ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտի աշխատակիցների հետ համատեղ պատրաստվեց 10 m^2 մակերեսով կալորիաչափ, որի միջոցով իրագործվեց հսկվող ֆոտոէմպուլսիաների մեթոդը (այս մեթոդը հնարավորություն է տալիս առանձնացնել անհրաժեշտ իրադարձությունները): Հետագայում կալորիաչափական մեթոդը զուգակցվեց մի շարք այլ մեթոդներով, որը հնարավորություն ընձեռեց էականորեն բարելավել արձանագրող սարքավորման բնութագրերն ու հնարավորությունները: Այսպես, կալորիաչափական սիստեմի զուգակցումը գողոսկոպիկ սիստեմի, մագնիսական սպեկտրաչափի, կայծային խցիկների հետ հնարավորություն ստեղծեց հետազոտությունների մեծ կոմպլեքս անցկացնել տիեզերական ճառագայթների բնագավառում:

Հիշատակության արժանի է մթնոլորտային լայն տարափների էներգիայի որոշման մեթոդը, որ մշակել են Ա. Ի. Ալիխանյանը և Թ. Լ. Ասաթիանին³: Խոսքը վերաբերում է մակերեսների վարիացիոն մեթոդին, երբ համընկնումների բազմակիության դեպքում մասնիկների խտությունը որոշվում է արձանագրող հաշվիչների մակերեսի փոփոխությամբ:

Ֆիզիկական էքսպերիմենտի մեթոդի հետ կապված հարցերը գնալով սկսեցին ավելի մեծ նշանակություն ստանալ հատկապես տարրական մասնիկների ֆիզիկայում: Ներկայումս տարրական մասնիկների բնույթի և օրենքների մասին գրեթե բոլոր տեղեկու-

² Бабаян Х. П., Бояджян Н. Г. и др., Описание установки состоящей из ионизационного калориметра, сцинтилляционных детекторов, гаммоскопических счетчиков. Ученые записки ЕРГУ, 1967, стр. 17.

³ Алиханян А. И., Асатиани Т. Л. и др., Исследование воздушных ливней. Новый метод исследования воздушных ливней. ДАН Арм. ССР, 1947, т. 6, № 2, стр. 33.

թյունները ստանում են արագացուցիչների և այն սարքավորման շնորհիվ, որի օգնությամբ հաջողվում է զիտել տարրական մասնիկները: Այդ սարքերի մեջ կարենոր տեղ է գրավում հետքային կայծախցիկը: Կայծային խցիկների զարգացմամբ ու կատարելագործմամբ դրազվել են ամրող աշխարհի փորձարար ֆիզիկոսները, բայց առավելագույն հաջողությունների հասան սովետական, հատկապես, մոսկվացի, թրիլիոցի և երևանցի ֆիզիկոսները:

Մոսկվայի ինժեներա-ֆիզիկական ինստիտուտում Բ. Ա. Գոլզոշինը իր աշխատակիցների հետ միասին որոշեց այն պայմանները, որոնց առկայությամբ կայծային հետքը կամ հետագիծը մի քանի սանտիմետր հետևում է մասնիկին, երբ նրա շարժման ուղղությունը գործադրվող էլեկտրական դաշտի ուղղության հետ կազմում է $\Theta \leq 40^\circ$ անկյուն: Վրացական ՍՍՀ ԳԱ ֆիզիկայի ինստիտուտում Գ. Ե. Զիրովանին իր աշխատակիցների հետ միասին, իսկ հետագայում ՍՍՀՄ ԳԱ ֆիզիկայի ինստիտուտում Մ. Ի. Դայոնը, Բ. Մ. Բոլոտովը և ուրիշներ, ավելի մանրամասնորեն հետազոտեցին կայծի շարժման ճշգրտությունը մասնիկի հետագծի երկայնքով և ցույց տվեցին, որ $նա \sim (10^{-3} \div 5 \cdot 10^{-4})$ ուադ է: Երևանի ֆիզիկայի ինստիտուտում Ա. Ի. Ալիխանյանը և Թ. Լ. Ասաթիանին⁴ իրենց աշխատակիցների հետ միասին ցույց տվեցին, որ կայծի շարժման նման ճշգրտությունը պահպանվում է ընդհանուր մինչև կես մետր և ավելի տարածություններում: Սովետական մի շարք ֆիզիկոսների շանքերով ստեղծվեց կայծային լայնարացակ խցիկ, որում արդեն կարելի է զիտել բարդ իրադարձություն կազմող բազում մասնիկներ: 1963 թվականին Ա. Ի. Ալիխանյանը, Թ. Լ. Ասաթիանին և է. Մ. Մաթևոսյանը իրենց աշխատակիցների հետ ցույց տվեցին, որ կայծը հետևում է մասնիկին անգամ այն դեպքում, եթե վերջինս ընթանում է կոր ճանապարհով: Դրա համար նրանք կայծային լայնարացակ խցիկը տեղադրեցին ուժեղ մազնիսական դաշտում, որտեղ բացահայտեցին շրջանագծային աղեղի տեսք ունեցող կամ գալարաձև կայծեր: Կայծային խցիկին դա տվեց միանգամայն նոր որակ՝ մասնիկների իմպուլսները չափելու հնարավորություն:

Կայծային խցիկների զարգացման գագաթնակետը հանդիսացավ կայծային խցիկի աշխատանքի ստրիմերային ուժիմի հայտ-

⁴ Алиханян А. И., Асатиани Т. Л., Матевосян Э. М., Двухэлектродная искровая камера с большим разрядным промежутком в магнитном поле. ЖЭТФ, 1963, т. 44, вып. 2, стр. 773.

նագործումը, որ 1964 թ. արեցին Բ. Ա. Դոլգոշեինի խումբը Մոսկվայում և Գ. Ե. Զիբովանու խումբը Թրիլիսիում: Սնուցման բարձրավոլտ իմպուլսի կրճատման հաշվին նրանք հասան սկզբ-նական փուլում լիցքի ընդհատմանը, որի հետևանքով տեսանելի հետք ստեղծվում է ոչ թե կայծով, այլ բաղում ստրիմերներով; Ստրիմերը՝ դա գազում էլեկտրոնային հեղեղն է կայծային աղեղի ձեւավորմանը նախորդող փուլում:

Գ. Ե. Զիբովանին կանխատեսեց, որ ստրիմերային խցիկում հետքերի պայծառությամբ կարելի է որոշել մասնիկների իոնաց-ման ունակությունները, իսկ Թ. Լ. Ասաթիանին իր աշխատակից-ների հետ միասին փորձով հաստատեց այդ կանխատեսումը: Հուսավորվող կենտրոնների թվով իոնացման ունակությունների սրոշումը մանրամասնորեն հետազոտել է Բ. Ա. Դոլգոշեինի խումբը:

Երևանի ֆիզիկայի ինստիտուտում հիմնականում մշակվել և հետազոտվել են լիցքաթափման մեծ ընդմիջումներով կայծային խցիկների հատկությունները, և բացի այդ, ստեղծվել են ինֆորմացիայի ավտոմատ հանումով մեծ լարային կայծախցիկներ (Ա. Ն. Պրոխորով և ուրիշներ): Շատ կարևոր հարց էր կայծային խցիկների սնուցման սիստեմների մշակումը: Պարզվեց, որ լիցքավորված մասնիկների հետագծի երկայնքով կայծի շարժման տարածքային ճշգրտությունը ուղղակի կապի մեջ է սնուցման բարձրավոլտ իմպուլսի պարամետրերի կայտնության հետ: Այս կապակցությամբ Երևանի ֆիզիկայի ինստիտուտը Տոմսկի պոլիտեխնիկական ինստիտուտի հետ համատեղ մշակեց հատուկ բարձրավոլտ գեներատորներ, որոնք արտադրում են առջեկի և հետեւ ճակատների անհրաժեշտ կորությամբ ու մեծ ամպլիտուդայով իմպուլսներ: Կայծային խցիկի սնուցման պրոբլեմի հետագա հետազոտությունները ավարտվեցին Երևանի ֆիզիկայի ինստիտուտում: Ստեղծվեցին Արկադե-Մարքսի կոմպակտ, հուսալի ու շահագործման տեսակետից համեմատաբար պարզ իմպուլսային գեներատորներ, ինչպես նաև մի այլ ինքնատիպ գեներատոր, որի միջոցով հաջողվեց իրագործել բարձրավոլտ ռադիո-իմպուլսներով լայնաբացակ կայծային խցիկների սնուցումը: Ինստիտուտում մի խումբ աշխատակիցներ Ա. Ի. Ալիխանյանը, Թ. Լ. Ասաթիանին, Կ. Մ. Ավագյանը, Է. Մ. Մաթևոսյանը, Ա. Ա. Նազարյանը, Վ. Մ. Քրիշյանը, Ա. Ս. Ալեքսանյանը, Ն. Խ. Բոստանջյանը, Գ. Ա. Մարիկյանը, Կ. Ա. Մաթևոսյանը, Ո. Օ.

Շարժատունյանը⁵ և ուրիշներ մեծ աշխատանք են կատարել հետքային կալծախցիկների բնութագրերի հետազոտման և կատարելագործման ուղղությամբ։ Մասնավորապես, Կ. Մ. Ավագյանը, է. Մ. Մաթևոսյանը հետազոտելով մինչև 20 տոկոս բանոնի հավելումով ստրիմերային խցիկի բնութագրերը, կարողացան իրականացնել աշխատանքի այնպիսի օպտիմալ ռեժիմ, որի ժամանակ հնարավոր եղավ բարձր արդյունավետությամբ արձանագրել ոհնագենյան դիապազոնի գամմա-քվանտները։

Կայծային խցիկներով էքսպերիմենտների հիմնական դժվարությունն այն է, որ դրանց օգնությամբ ստացվում է ֆիլմային մեծածավալ ինֆորմացիա, որի մշակումն այնքան էլ դյուրին չէ։ Այս կապակցությամբ անհրաժեշտ է հիշատակել զծում կայծային խցիկներից ինֆորմացիայի էլեկտրոնային հաշվիչ մեքենայով անդիլմ հանման մեթոդների մշակումը։ Հետագայում ֆիլմիկական էքսպերիմենտներում կայծային խցիկների կիրառումը մեծապես կախված էր ինֆորմացիայի մշակման ավտոմատացումից, մեծ հաշվողական մեքենաների օգտագործումով։

Հետազծային կայծախցիկը ներկայումս լայնորեն օգտագործում է աշխարհի շատ լարորատորիաներում և մոտ ավագայում նրա օգնությամբ, անկասկած, կարվեն նոր հայտնագործություններ։

Հետաքային կայծախցիկներ ստեղծելու ուղղությամբ կատարած աշխատանքների համար սովորական ֆիլմիկուների, այդ թվում Ա. Ի. Ալիխանյանին և Թ. Լ. Ասաթիանիին 1970 թվականին շնորհվել է կենինյան մրցանակ։

Տարրական մասնիկների ֆիլմիկայի բնագավառում կատարվող ժամանակակից էքսպերիմենտալ հետազոտություններում շատ կարեռ է ունենալ մասնիկների, մասնավորապես՝ Դ-քվանտների և էլեկտրոնների, մոնոքրոմատիկ բևեռացված փնջեր։ Բևեռացված մասնիկներով կատարվող էքսպերիմենտները տեսական սիսեմաների ստուգման լրացուցիչ հնարավորություն են տալիս, իսկ մոնոքրոմատիկ փնջերն ապահովում են էքսպերիմենտների անցկացման բարձր ճշգրտությունը։ Այս տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանում կատարված տեսական հետազոտությունները, որոնք հանգեցրին նոր մեթոդական մշակումների։

⁵ Алиханян А. И., Асатиани Т. Л. и др., Трековые искровые камеры в магнитном поле. Труды XII Международной конференции по физике высоких энергий. Дубна, 5—15 августа, 1964, т. 2, стр. 303.

1953թ. Ա. Լ. Տեր-Միքայելյանը⁶ կատարեց մի շարք տեսական աշխատանքներ, որոնցում ցույց տվեց, որ մեծ էներգիաների էլեկտրոնների արգելակման ճառագայթման համար բյուրեղում էական է դառնում հենց իր՝ բյուրեղի կառուցվածքը: Կեղծ ֆոտոնների մեթոդով ցույց տրվեց, որ դա հանգեցնում է բյուրեղում լիցքի ներխուժման այնպիսի ուղղությունների գոյության, երբ արգելակման ճառագայթումը կարող է ուժեղանալ կամ թուլանալ:

Հետագայում Ցուրերալը 1956—57 թթ. անցկացրեց նույնանման հաշվարկներ գրգուման տեսության միջոցով և երկույթի տեսությունը հասցրեց թվական արդյունքների՝ դրանք էքսպերիմենտի հետ համեմատելու համար: Նա էլ առաջին անգամ ցույց տվեց այդ ճառագայթման մոտ էական բևեռացման առկայությունը: Վերջապես, Դիամրիինին իր աշխատակիցների հետ միհասին 1962թ. ցույց տվեց, որ ինտերֆերենցիոն երկույթների հետևանքով արգելակման ճառագայթման սպեկտրը բյուրեղում վեր է ածվում հստակ արտահայտված գագաթներով սպեկտրի: Այդ գագաթների էներգիան կախված է էլեկտրոնի իմպուլսի և բյուրեղի առանցքի միջև կազմված անկյունից:

Ճառագայթման այդ հատկությունները հանգեցրին նրան, որ ներկայումս ալմաստի բյուրեղում արգելակման ճառագայթման օգնությամբ գրեթե մոնոքրոմատիկ և բևեռացված գամմա-քվանտների ստացման մեթոդիկան ստացել է համընդհանուր ճանաչում և կիրառվում է մասնավորապես ԱՐՈՒՍ արագացուցիչում:

80 միկրոն հաստությամբ ալմաստե բյուրեղաթիթեղի վրա Ռ. Օ. Ավագյանն ու իր աշխատակիցները⁷ ստացել են γ -քվանտների 85 տոկոս բևեռացումով ֆոտոնների քվազիմոնոքրոմատիկ փոշեր: Սակայն այս մեթոդն ունի այն թերությունը, որ γ -քվանտների բևեռացմանը հանգեցնող կոհերենտ երկույթները տեղի են ունենում $\frac{3}{4} E_0$ շգերազանցող ֆոտոնների էներգիայի դեպքում, որտեղ E_0 -ն էլեկտրոնների սահմանային էներգիան է: Միաժա-

⁶ Тер-Микаелян М. Л., Интерференционные излучения сверхбыстрых электронов. ЖЭТФ, 1953, т. 25, вып. 3, стр. 296.

⁷ Авакян Р. О., Армаганян А. А. и др., Квазимонохроматический поляризованный пучок фотонов Ереванского ускорителя. Труды международной конференции по аппаратуре в физике высоких энергий. Дубна, 1971, т. 2, стр. 746.

մանակ մի շարք էքսպերիմենտներ պահանջում են արագացուցչի սահմանային էներգիայի ֆուտոնների բարձր բևեռացում: Ռ. Օ. Ավագյանն իր աշխատակիցների հետ միասին սահմանային էներգիայի բևեռացված ֆուտոնների ստացման համար կիրառեց Կարիոյի առաջարկած մեթոդը. վերջինիս էությունն այն է, որ երբ բարձր էներգիաների ֆուտոններն անցնում են բյուրեղի միջով, առաջանում է բյուրեղի կողմնորոշումից կախված առավելաչափ բևեռացում: Յուլյա արվեց, որ կորունդի մոնորդուրեղը կարող է լավ բևեռացուցիչ հանդիսանալ:

Էլեկտրոնային արագացուցիչներով բարձր էներգիայի մոնորդումափեկ և բևեռացված ֆուտոնների ստացման մյուս մեթոդը առաջարկել են Յ. Ռ. Հարությունյանը, Ի. Ի. Գոլդմանը և Վ. Ա. Թումանյանը⁸ և նրանցից անկախ Միլրուսնը: Յուլյա արվեց, որ լազերային ֆուտոնների կոմպանյան ցրման դեպքում էլեկտրոնների բարձր էներգիատիկ փնջերի վրա առաջանում են բարձր էներգիաների գամմա-քվանտաների մոնորդումափեկ և բևեռացված փնջերը Այս մեթոդը իրագործվեց Մթենֆորդի (ԱՄՆ) էլեկտրոնային արագացուցիչում:

Այժմ քննարկենք այն աշխատանքները, որոնք կապված են անցումային ճառագայթման երեսութիւն տեսական հետազոտության հետ:

1957 թվականին ՀՍՍՀ ԳԱ ֆիզիկայի ինստիտուտում սկսեցին տեսական հետազոտություններ անցկացնել անցումային ճառագայթման հատկությունների որոշման նպատակով: Այդ ուղղությամբ առաջին կանխատեսումները արել են Վ. Լ. Գինզբորգը և Ի. Մ. Ֆրանկը 1946 թվականին: Իսկ 1959 թվականին Գ. Մ. Ղարիբյանը⁹ ապացուցեց, որ խիստ ուշլյատիվիստական մասնիկների դեպքում այդ ճառագայթման հիմնական բաժինն ուղղված է առաջ և գծայնորեն կախված է մասնիկի էներգիայից: Ապացուցվեց նաև, որ այդ ճառագայթման սպեկտրը գտնվում է հաճախականությունների ունտգենյան տիրուլիթում: Այդ աշխատանքը խթան հանդիսացավ հետագա հետազոտությունների համար: Դրանցից

⁸ Арутюнян Ф. Р., Гольдман И. И. и др., Новый метод получения квазимохроматических и поляризованных пучков γ -квантов высокой энергии. Труды Международной конференции по ускорителям. Дубна, 1963 М, 1964, стр. 400.

⁹ Гарibyan Г. М., Померанчук К. Я., О пределах применимости теории переходного излучения. ЖЭТФ, 1959, т. 37, вып. 6, стр. 1828.

նշենք աղճատված սահմանի վրա անցումային ճառագայթման, բազմակի ցրման ազդեցության հաշվառման, լիցքավորված մասնիկների և դիպոլային մոմենտների խտացումներից առաջացած անցումային ճառագայթման, անցումային ճառագայթման վրա տարածական դիսպերսիայի ազդեցության հաշվառման սոլուտիվամբ արված աշխատանքները, որ կատարել են Ա. Յ. Ալատունին, Գ. Մ. Ղարիբյանը, Ի. Ի. Գոլդմանը, Ն. Ա. Կորիսմազյանը, Հ. Ս. Մերգելյանը և ուրիշներ¹⁰: Այս հարցի նկատմամբ հետաքրքրությունը պայմանավորված է նրանով, որ մասնիկների էներգիայի էլեկտրամագնիսական կորուստների հայտնի մեխանիզմներից միայն անցումային ճառագայթումն է հանգեցնում կորուստների չհազեցած աճի, երբ մասնիկների էներգիան աճում է: Սակայն ճառագայթման փոքր ինտենսիվությունը մի սահմանում անհրաժեշտ է դարձնում ստիպել մասնիկին անցնելու մեծ թվով սահմաններով, որպեսզի շոշափելի դառնա մեկ մասնիկի արձակած անցումային ճառագայթումը: Եերտավոր միջավայրում ունտգենյան անցումային ճառագայթման հետազոտության ուղղությամբ առաջին աշխատանքները կատարել են Մ. Լ. Տեր-Միքայելյանը, Ա. Յ. Ալատունին, Ն. Ա. Կորիսմազյանը, Գ. Մ. Ղարիբյանը և Ի. Ի. Գոլդմանը 1960—61 թթ.¹¹: Գրեթե միաժամանակ ձեռնամուխ եղան նաև ունտգենյան անցումային ճառագայթման էքսպերիմենտալ հետազոտություններին: Ֆ. Ռ. Հարությունյանի և նրա աշխատակիցների աշխատանքներում իրագործվեց Ա. Ի. Ալիխանյանի և ուրիշների¹² առաջարկած անցումային քվանցման գաղափարը բնութագրական ճառագայթման օգնությամբ:

Ա. Գ. Հովհաննիսյանը Կ. Ա. Խստիրյանի հետ համատեղ տեսականորեն պարզեց, թե ինչ պայմաններում և հաճախականությունների օպտիկական որ տիրուցիում է անցումային ճառագայթման ինտենսիվությունը խստորեն կախված մասնիկի էներ-

¹⁰ Аматуни А. Ц., Корхмазян Н. А., Переходное излучение в случае размытой границы двух сред. ЖЭТФ, 1960, т. 39, стр. 1011.

¹¹ Гарibyan G. M., Gольдман И. И., Излучение частицы в слоистой среде. ДАН Арм. ССР, 1960, т. 31, № 4, стр. 219.

¹² Алиханян А. И., Арутюнян Ф. Р., Испирян К. А., Тер-Микаелян М. Л., Об одной возможности дедектирования заряженных частиц высокой энергии. ЖЭТФ, 1961, т. 41, стр. 2002.

զիայից¹³, Հետագայում այդ արդյունքը հաստատվեց էքսպերիմենտալ ձևով:

Հայաստանում անցումային ճառագայթման ուսումնասիրման ուղղությամբ կատարված աշխատանքների որոշ ընդհանրացում է կատարված Մ. Լ. Տեր-Միքայելյանի «Միջավայրի ազդեցությունը էլեկտրամագնիսական պրոցեսների վրա բարձր էներգիայի դեպքում» մենագրությունում¹⁴:

1967 թ. ԱՐՈՒՍ արագացուցիչ գործարկումից հետո, անցումային ճառագայթման գծով էքսպերիմենտալ աշխատանքները ավելի մեծ թափ ստացան: Այդ աշխատանքներն իրենց հերթին ազդեցություն ունեցան տեսական հետազոտությունների վրա: Գ. Մ. Ղարիբյանն իր աշխատակիցների հետ միասին կատարեց աշխատանքների մեծ ցիկլ անցումային ճառագայթման տեսության ուղղությամբ¹⁵: Այն աշխատանքների հետ միաժամանակ, որոնք որոշ ճշտումներ մատրին շերտավոր միջավայրում անցումային ճառագայթման գծով ավելի վաղ ստացված բանաձևերում, սկսեց զարգանալ նաև միկրոսկոպիկ մոտեցումը: Բանն այն է, որ միջատամային հեռավորության կամ նրանից ավելի պակաս երկարության ալիքների համար մակրոսկոպիկ մոտեցման դեպքում ստացվող արդյունքները անբավարար էին: Այդ պատճառով Գ. Մ. Ղարիբյանն ու իր աշխատակիցները սկսեցին որոնել միկրոսկոպիկ տեսության կառուցման ուղիները Սկզբում ստեղծվեց կոպիտ միկրոսկոպիկ տեսություն, որտեղ ատոմները ներկայացվում էին համասեռ դիէլեկտրիկ գնդերի ձևով: Ստացվեց մի բանաձև, որն ըստ մեծության կարգի համընկնում էր մակրոսկոպիկ տեսությունից բիոդ բանաձևին, բայց արդեն ավելի մեծ ինֆորմացիա էր պարունակում, քան վերջինը: Սակայն անցումային ճառագայթման հետեղական միկրոսկոպիկ տեսությունը մշակվեց միայն ուստաղենյան ճառագայթների գիֆրակցիայի դինամիկ տեսության մեթոդների կիրառումից հետո: Գ. Մ. Ղարիբյանը և Յան Շին ստեղծեցին քվանտային տեսություն այն էլեկտրամագնիսական ճառագայթման համար, որն առաջանում է նյութի միջով լիցքի համաշափ և ուղղագիծ անցման դեպքում: Ունտգենյան ճառա-

¹³ Испиран К. А., Каанян С. А. и др., Рентгеновское переходное излучение в различных средах. ИАН Арм. ССР, Физика, 1972, т. 7, № 5, стр. 377.

¹⁴ Тер-Микаелян М. Л., Влияние среды на электромагнитные процессы при высоких энергиях, Ереван, 1969, стр. 557.

¹⁵ Гарibyan G. M., N. S., ЕФИ—27 (73).

գայթների դիֆրակցիայի դինամիկ տեսությունից քաշ հայտնի երկալիքային մոտեցման ժամանակ խնդիրը լուծվեց ընդհանուր դեպքի համար, երբ բյուրեղի ատոմները վերջնական չափեր ունեն և զերմային տատանումներ են կատարում հավասարակշռության դիրքի շուրջը: Պարզվեց, որ լիցքի դաշտը տալիս է դիֆրակցիոն մի ամբողջ պատկեր՝ լառտէգրամ, սրա կենտրոնական բիծը պատկերվում է մի արտահայտությամբ, որը համընկնում է սովորական մակրոսկոպիկ տեսությունից հետեւող բանաձեկի հետ: Ապացուցվեց, որ բյուրեղի հաստության մեծացմանը զուգընթաց լառտէգրամը ավելի վառ է արտահայտվում: Կողային բծերն ավելի ինտենսիվ են դառնում և կարող են մի կարգով գերազանցել սովորական անցումային ճառագայթումը: Իսկ կենտրոնական բծում, որտեղ ներկայացված են բոլոր հաճախականությունները, կողային բծերին համապատասխանող հաճախականությունների վրա նույնպես կան մաքսիմումներ: Այդ հաճախականությունները բավարարում են թրեգի պայմաններին: Ապացուցվեց նաև, որ նույնանման էֆեկտներ են առաջանում նաև այն դեպքում, երբ լիցքն անցնում է անընդհատ պարբերական միջավայրով:

Անցումային ճառագայթման տեսության բնագավառում ձեռք բերված հաջողությունների կողքին մեծ նվաճումներ ունեն նաև փորձարարները, որոնք ջանում են անցումային ճառագայթման երևույթը օգտագործել բարձր էներգիաների մասնիկների դետեկտորներ ստեղծելու համար:

Երևանի ֆիզիկայի ինստիտուտի մի խումբ աշխատակիցներ՝ Ա. Ի. Ալիխանյանը, Մ. Պ. Լորիկյանը և ուրիշներ¹⁶ առաջարկեցին ստրիմերային խցիկի միջոցով (որը լցված է նեռով և լրացված քսենոնով) անցումային ճառագայթմանը գրանցելու շատ արդյունավետ եղանակ: Սրա հիմնական առավելությունն այն է, որ միևնույն սարքում տեղի է ունենում ինչպես բուն մասնիկի, այնպես էլ անցումային ճառագայթման անջատ գրանցում: Իրեն անցումային ճառագայթման ռադիատոր, մասնավորապես, կիրառվեց պենոպլաստ, որը բավականաշափ արդյունավետությամբ կատարում է շերտավոր միջավայրի գերը: Դա խթանեց Գ. Մ. Ղարիբյանի և Յան Շիի ու Նրանց աշխատակիցների աշխատանքները, որոնք մոդելեցին պենոպլաստը անկանոն շերտավոր միջավայրով նյութերի առաջադրված շերտերի ու նրանց միջ

¹⁶ Алиханян А. И., Авакян К. М., Гарифян Г. М. и др., Регистрация рентгеновского переходного излучения с помощью стримерной камеры. ИАН Арм. ССР. Физика, 1970, т. 5, вып. 4, стр. 267.

օղային ինտերվալների բաշխումով՝ Տևական հաշվարկների արդյունքները բավականաշափ լավ համապատասխաննեցին էքսպերիմենտալ տվյալներին։ Հարկ է նշել հիշատակված էքսպերիմենտալ աշխատանքի առանձնահատուկ գերը, որը համոզիչ կերպով ցուցագրեց անցումային ճառագայթման երևոյթի օգտագործման հնարավորությունը գերբարձր էներգիայի մասնիկների գետեկտացման համար և հսկայական հետաքրքրություն առաջացրեց դիտական աշխարհում։ Այդ մասին է, մասնավորապես, վկայում ժամանակակից փիզիկայում առավել կարևոր հայտնագործություններ լուսաբանող „Adventures in Experimental Physics“ (1972 թ. էջ 101) ամսագրում անցումային ճառագայթմանը նվիրված նյութերի տարագրությունը երեանցի ֆիզիկաների աշխատանքների վկայակոչումով։

Գերբարձր էներգիայի մասնիկների անցումային ճառագայթման գրանցման մյուս հնարավորությունը անցումային Դ-բվանտների ցրման օգտագործումն է ի հաշիվ կոմպաոն էֆեկտի։ Մ. Պ. Լորիկյանն իր աշխատակիցների հետ միասին այդ ցրված բվանտները գրանցում էր համեմատական հաշվիչներով, որոնց շնորհիվ այդպիսի գետեկտորը աշքի է ընկնում արագագործությամբ։

Վերջապես, նշենք բարձր էներգիաների մասնիկների իդենտիֆիկացիայի ևս մեկ մեթոդ, երբ գետեկտորի մեջ ընկնում են ինչպես առաջնային մասնիկներ, այնպես էլ նրանցով ստեղծված անցումային բվանտները Որպես այդպիսի գետեկտոր, որը տեղագրվում է ճառագայթման ռադիատորից անմիջապես հետո, Ա. Ի. Ալիխանյանը, Ա. Գ. Հովհաննիսյանը¹⁷ և ուրիշներ կիրառեցին բավականաշափ արագագործ քսենոնային սցինլիւցիոն հաշվի։

Կասկած չկա, որ անցումային ճառագայթման մեթոդը, որի միջոցով կարելի է իդենտիֆիկացնել և չափել գերբարձր էներգիաների մասնիկների լորենց-ֆակտորները, մեծ ապագա ունեն, եզ զարմանալի շէ, որ աշխարհի շատ լարորատորիաներում սկսել են անցումային ճառագայթման երևոյթի սիստեմատիկ հետազոտություններ։ Այդ մասին են, մասնավորապես, վկայում բարձր էներգիաների ֆիզիկայում սարքավորման գծով վերջին Միջազգային կոնֆերանսի (Խտալիս, 1973 թ.) նյութերը։ Անցումային

¹⁷ Алиханян А. И., Испирян К. А., Оганесян А. Г. и др., Экспериментальное исследование детектора частиц сверхвысоких энергий с использованием рентгеновского переходного излучения. Письма в ЖЭТФ, 1970, т. 11, стр. 347.

ճառագայթմանն էին նվիրված Ա. Ի. Ալիխանյանի, Գ. Մ. Ղարիբյանի և ամերիկյան ֆիզիկոս Լ. Յուլյանի ամփոփիչ ղեկուցումները:

Այժմ քննարկենք արագ մասնիկների իոնացման կորուստներին վերաբերվող աշխատանքները: Մտարերենք, որ քսանական թվականների վերջերին տեսականորեն հաստատված էր, որ մասնիկների էներգիայի աճին զուգընթաց իոնացման կորուստները պետք է աճեն լոգարիթմորեն: Սակայն 1941 թ. է. Ֆերմին ցուց տվեց, որ եթե նկատի ունենանք բնեռացումը, որը նյութի մեջ կատարում է լիցքավորված մասնիկի դաշտը, ապա դա հանգեցնում է կորուստների հագեցմանը: 1959 թ. Գ. Մ. Ղարիբյանը ՀՍՍՀ ԳԱ ֆիզիկայի ինստիտուտում տեսականորեն ապացուցեց, որ իոնացման կորուստները նյութի նուրբ թաղանթներում, որոնց հաստությունը ալիքի օպտիկական երկարությունից էլ պակաս է, մասնիկների էներգիայի հետ միասին լոգարիթմորեն աճում են: 1961—62 թթ. այդ էֆեկտը էքսպերիմենտալ ձևով հայտնաբերվեց Երևանի ֆիզիկայի ինստիտուտի (Մ. Պ. Լորիկյան) և ուկրաինական ֆիզիկատեխնիկական ինստիտուտի համատեղ շանքերով, Խարկովի գծային արագացուցիչով: Նուրբ թաղանթներում իոնացման կորուստների ուղղությամբ հետազոտությունները մինչև օրս էլ շարունակվում են, բայց արդեն արտաքին էլեկտրական դաշտով ուժեղացված երկրորդային էլեկտրոնային էմիսիայի հետազոտությունների առումով:

Պարզվեց, որ որոշ դեպքերում առաջնային էլեկտրոնների հոսանքի աճին զուգընթաց, երկրորդային էմիսիայի հոսանքը նույնպես աճում է լոգարիթմորեն: Այդ երկույթի տեսական հետազոտությունները (Գ. Մ. Ղարիբյան և Գ. Գ. Բախչյան¹⁸) ցույց տվեցին, որ չափազանց էական է ուժեղ հաստատուն էլեկտրական դաշտի առկայությունը կամ բացակայությունը, որ սովորաբար առաջանում է նուրբ դիէլեկտրիկ շերտի ներսում երկրորդային էլեկտրոնային էմիսիայի կատողին: Այդպիսի դաշտի առկայությունը հանգեցնում է նրան, որ երկրորդային հոսանքը լոգարիթմորեն կախման մեջ է ընկնում առաջնային մասնիկների էներգիայից:

Էքսպերիմենտալ ձևով երկրորդային էլեկտրոնային էմիսիան ուսումնասիրել են Մ. Պ. Լորիկյանը, Ռ. Ի. Կավալովը և Ն. Ն. Տրոֆիմչովը¹⁹: Նրանց նպատակն էր ստեղծել կառավարվող ներ-

¹⁸ Գարիբյան Գ. Մ., Բախչյան Գ. Գ., К теории мониторов вторичной эмиссии. ИАН Арм. ССР, Физика, 1967, т. 2, № 6, стр. 415.

¹⁹ Лориկян М. П., Кавалов Р. Л. и др., Вторичная эмиссия на прострел из пленок без проводящего слоя. Радиотехника и электроника, 1968, т. XIV, № 5, стр. 936.

թին էլեկտրական դաշտով փխրում կաղուներ և այդ դաշտի օգնությամբ երկրորդային էլեկտրոնները հեռացնել կաղութից նրանք դատան, որ էլեկտրոնային էմիսիան առաջնային էլեկտրոնների էներգիայի դեպքում, որը չի անցնում 50 ՄէՎ-ից, կախված է էլեկտրոդների միջև պոտենցիալների տարրերությունից և կառավարվող բնույթի է կրում: Զեռք բերվեցին երկրորդային էլեկտրոնային էմիսիաների բարձր գործակիցներու երկրորդային էլեկտրոնային էմիսիաների մոնիթորների հատկությունների հետազոտությունը ցույց տվեց, որ դրանց հիման վրա կարող են ստեղծվել մասնիկների բարձր լուծունակության դետեկտորներ:

Հարկ է նշել, որ Գ. Մ. Ղարիբյանի և Գ. Գ. Բախշյանի հիշյալ աշխատանքում բնորդվում է, որ էլեկտրական ուժեղ դաշտը կարող է աղղեցություն ունենալ նաև միջուկային ֆոտոէմուլսիայում դադանի պատկերի առաջացման պրոցեսի վրա:

Ինչպես հայտնի է, էքսպերիմենտալ միջուկային ֆիզիկայում լիցքավորված մասնիկների դրանցման համար լայնորեն օգտագործվում են միջուկային էմուլսիաները: Էմուլսիոն շերտերի լուսանկարչական մշակումը տևում է օրեր և անգամ շաբաթներ, մի բան, որը շատ է բարդացնում մշակման մեթոդիկան և սխալների տեղիք տալիս հետքերի վերլուծության ժամանակի:

1961—68 թթ. Ա. Բ. Հակոբյան, ի. Պաշազյանը իրենց աշխատակիցների հետ միասին մշակեցին շերտերի մշակման նոր, այսպիս կոչված, ակուստիկ մեթոդ՝ գերձայնային և ձայնային տատանումների կիրառումով, որը չորս անգամ արագացնում է մշակման լրիվ ցիկլը և բարելավում շերտի լուսանկարչական, մեխանիկական և ֆիզիկական պարամետրերը²⁰: Ակուստիկ մեթոդի կարենոր առավելությունը էմուլսիայի աղավաղումների նվազեցումն է, որը հնարավորություն է տալիս ավելի ճշգրտողեն շափել լիցքավորված մասնիկների էներգիան: Էմուլսիաների երևակման սարքը, որ մշակվել է լարորատորիայում, կարող է հաջողությամբ կիրառվել ֆիզիկական խոշոր էքսպերիմենտների ժամանակակից էմուլսիաների էական առանձնահատկությունն այն է, որ դրանք օժտված են ցանկացած իոնացնող ճառագայթումը գրանցելու հաստատում հատկությամբ: Ուստի շատ կարևոր է մշակել մի

²⁰ Акопова А. Б., Мелкумова Л. В. и др., Фотографическая обработка ядерных эмульсий ультразвуковыми колебаниями. ПТЭ, 1964, № 2, стр. 66. Акопова А. Б. и др., Некоторые вопросы по обработке ядерных эмульсий в акустическом поле. ЖН и ПФИК, 1970, т. 15, вып. 4.

մեթոդ, որով հնարավոր լինի կառավարել և նախապես առաջադրված ծրագրով կարգավորել էմուլսիայի զգայունությունը: Դա թույլ կտա կողմնակի իրադարձությունների մեծ փոնի վրա առանձնացնել հետաքրքրող իրադարձությունները: Ա. Բ. Հակոպովայի լաբորատորիայում օգտագործվեց Գ. Մ. Ղարիբյանի և Գ. Գ. Բախչյանի արտահայտած գաղափարը, և մշակվեց իմպուլսային էլեկտրական դաշտերի կիրառումով մեթոդիկա, որը թույլ է տալիս վերացնել տիեզերական ճառագայթման զգալի մասը կազմող թերեւ մասնիկների ֆոնը: Նաև հնարավոր եղավ տիեզերական ծանր և գերծանր մասնիկների հետազոտության նպատակով օգտագործել միջուկային էմուլսիան տիեզերքի պայմաններում երկարատև լուսակայման համար:

Երեանի արագացուցիչում անցկացրած էքսպերիմենտները ֆուտծնման ուղղությամբ պահանջեցին ստեղծել ճշգրիտ մագնիսական սպեկտրալափ և գամմա-սպեկտրալափ 0,8-ից մինչև 4 ԳԵՎ/ս իմպուլսներ ունեցող լիցքավորված II -մեզոնները և պրոտոնները գրանցելու համար աշխատակիցների մի մեծ խումբ Հ. Հ. Վարդապետյանի ղեկավարությամբ մշակվեց սարքավորում, որը բաղկացած է շեղող մագնիսից, մագնիսական ուսպնյակներից, գողոսկոպներից, շերենկովյան և սցինցիլացիոն հաշվիչներից և հնարավորություն է տալիս մեծ ճշգրտությամբ որոշել գրանցվող մասնիկների իմպուլսները²¹: Ի տարրերություն մասնիկները ուղաձիգ հարթությամբ շեղող կամ «թեք պատուհան» ունեցող նույնանման բարձրաճշգրիտ սպեկտրալափերի, այստեղ իրադրվեց մասնիկները հորիզոնական հարթությամբ շեղող սիստեմ: Սպեկտրալափը հաշվարկվել է էլ՛Յ-ով ըստ շեղող մագնիսի և մագնիսական ուսպնյակների տեղագրության: Բացի դա, սպեկտրալափի մագնիսական սիստեմի օպտիկական հատկությունները հետազոտվել են մոնոքրոմատիկ էլեկտրոնային փոնի վրա: Աշխատողների մի մեծ խմբի ջանքերով ստեղծվեց համաշխարհային ստանդարտների մակարդակով մագնիսական ունիվերսալ սպեկտրալափի ըստ $\frac{\Delta P}{P} \sim \text{իմպուլսի } 1-2 \text{ տոկոս } \text{լուծունակությամբ:}$

Այդ նույն լաբորատորիայում II°, դ° տիպի շեղոք մեղոնների՝ երկու գամմա-քվանտների տրոհումը գրանցելու համար ստեղծվեց

²¹ Абрамян Л. О., Аганянц А. О., Адамян Ф. В. и др., Магнитный спектрометр для регистрации частиц в области до 4 ГЭВ/с. Препринт ЕФИ—МЭ—10 (72), то же ПТЭ, 1973, № 2, стр. 60.

երկճյուղ գամմա-սպեկտրալափ բաղկացած լրիվ կլանման երկու շերենկովյան հաշվիչներից: Ստեղծվեց գրանցման սխստեմ, որը հանրավորաթյուն ավեց սպեկտրալափի լուծունակությունը հացընել 5 ն վայրկու:

1956 թվականին մի մեծ խումբ Ն. Մ. Քոչարյանի²² ղեկավարությամբ սկսեց աշխատել տարրական մասնիկների գրանցման խոստամությունը մեթոդի՝ պղպջակային խցիկների ստեղծման վրա: Պատրաստվեց 0,5 լիտր ծավալով պղպջակային խցիկ, ուր ուսումնասիրվում էին տարրեր աշխատանքային խառնուրդների բնութագրերը: 60-ական թվականների սկզբներին ինստիտուտի աշխատակիցները ՍՍՀՄ ԳԱ ֆիզիկայի ինստիտուտի և Միջուկային հետազոտաթյունների միացյալ ինստիտուտի հետ համատեղ ստեղծեցին ժամանակի ամենամեծ (570 լիտր ծավալով) պղպջակային խցիկը Եվ, վերջապես, ԱՐՈՒՍ-ով էրսպերիմենտներ կատարելու համար Ա. Ի. Ալիխանյանը, Ա. Ա. Ալեքսանյանը և մյուս աշխատակիցները²³ երեսնի ֆիզիկայի ինստիտուտում կառուցեցին հատուկ կոնստրուկցիայի պղպջակային խցիկ 300 լիտր ծավալով, որով արդեն ստացվել են որոշ ֆիզիկական արդյունքներ, իսկ հետագայում, կառուցվածքային փոփոխություններից հետո, խցիկը օգտագործվելու է արագացուցչի գամմա-փոշերից մեկի վրա:

Բարձր էներգիաների մասնիկների ղետեկտման և մեկ մեթոդի՝ սցինցիլացիոն տեխնիկայի մասին: Ա. Ա. Վարդանյանի ղեկավարած թիմիական լաբորատորիայում ստեղծվեցին աշխարհի լավագույն նմուշներին ոչնչով չպիզող պլաստիկ սցինցիլատորներ²⁴: Սցինցիլացիոն հաշվիչների բնույթները հետազոտելու ուղղությամբ կատարած աշխատանքների մեծ ցիկլի շնորհիվ, որ կատարեց Լ. Ս. Բաղդասարյանը իր աշխատակիցների հետ միասին, ստեղծվեց մասնիկների թուշքի ժամանակը չափող բարձր լուծողունակության սխստեմ:

Առաջին անգամ Միջուկային հետազոտությունների ինստիտուտի (Լ. Ի. Լապիդուս և ուրիշներ) և երեսնի ֆիզիկայի ինստիտուտի (Գ. Վ. Բաղալյան և ուրիշներ) գիտնականների միացյալ

²² Կոչարյան Հ. Մ., Ալեքսանյան Ա. Ս. և այլն, Исследование работы пузырьковой камеры с бинарными смесями. Смесь пропана и фреона—12. ДАН Арм. ССР, 1958, т. 27, № 5, стр. 217.

²³ Ալիխանյան Ա. Ի., Ալեքսանյան Ա. Ս. և այլն, 300-литровая пузырьковая камера ПК—300, ПТЭ, 1969, № 2, стр. 45.

²⁴ Վարդանյան Ս. Ա., Բարսамյան Ս. Պ. և այլն, Синтез некоторых бисстильбенов. Арм. химический журнал. 1973, № 4, стр. 334.

Խմբի շանքերով Երևանի Էլեկտրոնային արագացուցիչի համար կիրառվեց սիլիցիումի կիսահաղորդիչային դետեկտորի և պոլիէթիլային նուռը թաղանթների մեթոդիկա: Այդ մեթոդի օգնությամբ հետազոտվեցին ըստ և առաջական ցրումը հաղորդվող փոքր իմպուլսների դեպքում ($G^2 \leq F^{-2}$):

Վերջապես նշենք, որ Երևանի ֆիզիկայի ինստիտուտի մի խումբ աշխատակիցներ՝ Ա. Ի. Ալիխանյանը, Գ. Լ. Բայաթյանը և ուրիշներ²⁵, ակտիվորեն մասնակցեցին Սերպուխովի պրոտոնային արագացուցիչում մինչև 46 ԳէՎ էներգիայով մաքուր էլեկտրոնային փուլային փուլային փուլային փուլային փուլային:

Ֆիզիկոսների այդ նույն խումբը ստեղծեց և Երևանի ֆիզիկայի ինստիտուտի արագացուցիչում գործարկեց նշագիր ֆոտոնների սիստեմը, աղբոնային և հեղեղային դետեկտորները, որոնց օգնությամբ մինչև 46 ԳէՎ էներգիայի սահմաններում ֆոտոնների ուղղությամբ մի շարք հետազոտություններ անցկացվեցին Սերպուխովում:

С. М. АХВЕРДЯН, Р. А. САРДАРЯН

МЕТОДИКА ЭКСПЕРИМЕНТАЛЬНЫХ ИССЛЕДОВАНИЙ В ОБЛАСТИ ФИЗИКИ ВЫСОКИХ ЭНЕРГИЙ В АРМЕНИИ

Резюме

В работе дается обзор методов исследований в области физики высоких энергий в Армении.

Первые методические исследования были связаны с масс-спектрометром Алиханова-Алиханяна и исследованием космических лучей с методом ионизационного колориметра и вариации площадей. Затем большое развитие получили трековые искровые камеры, которые использовались в экспериментах на ускорителе. За работы по созданию трековых искровых камер армянские физики А. И. Алиханян и Т. Л. Асатиани совместно с другими физиками Союза были удостоены Ленинской премии 1970 г.

В Армении были разработаны два метода получения монохроматических и поляризованных фотонов высокой

²⁵ Алиханян А. И. и др., НС ЕФИ—26 (73), Ереван, 1973.

энергии, которые были реализованы на современных ускорителях и, в частности, на Ереванском.

Большое развитие получила методика регистрации частиц высоких энергий с помощью переходного излучения. Было проведено большое число теоретических и экспериментальных работ, получивших широкую известность. Для создания детекторов частиц высоких энергий исследовалась вторичная электронная эмиссия. Были созданы современные установки для экспериментов на ускорителях. Это универсальный магнитный спектрометр, гамма-спектрометр, пузырковые камеры и другие.